

Կարգապահությունը բնության մեջ



Կարդացեք և հիշեք, թե ինչպե՞ս պետք է իրեն բնության մեջ պահի դաստիարակված, կարգապահ մարդը և այս խորհուրդները փոխանցեք ձեր ընկերներին: – Դաստիարակված մարդը ծառերի ու թփերի ճյուղերը չի կտրում, անտառային ծաղիկները չի քաղում: Խոտի ծածկը պահպանում է խոնավությունը և ապրելու հնարավորություն է տալիս բազմաթիվ օգտակար միջատների ու մանր կենդանիների:

- Մի պոկիր քեզ անծանոթ, ինչպես նաև ծանոթ թունավոր սնկերը: Դրանցից շատերը անտառի բնակիչների համար օգտակար են:
- Չի կարելի բռնել և տուև բերել անտառային կենդանիներին, միջատներին ու թռչուններին: Նրանց համար մեր «զվարճանքը» հաճախ կարող է ավարտվել հիվանդություններով, տանջանքներով ու մահով: Նրանք խաղալիքներ չեն:
- Պատահաբար կամ մտածված մի ավիրի մրջնաբույսը: Մրջյունները չեն հասցնի մինչև ցրտերը վերանորոգել իրենց բնակարանը և կսատկեն:
- Եվ իհարկե՛, դաստիարակված մարդը բնության գրկում հանգստանալուց հետո իր հետևից աղբակույտ չի թողնի: